# ՊԼԱՆ

## <<ՀՀ  ԼՈՌՈՒ  ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ N1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ>>  ՊՈԱԿ-Ի ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ  ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

## 2023-2024 ՈՒՍՏԱՐԻ

Հաստատված է դպրոցի մանկավարժական խորհրդի 2022-2023ուստարվա

22.08.2023թ. երկրորդ նիստում

Նիստի նախագահ՝ /Մ. Ավետիսյան/

Քարտուղար՝ /Ա. Հարությունյան/

# Նախաբան

Հա յ ժողովուրդն իր բազմադարյա գոյության ընթացքում միշտ էլ կարևորել է կրթության դերն ու նշանակությունը: Անկախ Հայաստանում դպրոցի հանդեպ դրսևորած ուշադրությունից ,հատկապես վերջին տարիներին , այն աննախադեպ է:

<<ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N1 հիմնական դպրոց>>ՊՈԱԿ-ը իրականացնում է տարրական և հիմնական հանրակրթական ծրագրեր:

2021-2022ուստարում դպրոցում սովորել է 424 աշակերտ , որից 235 -ը տղաներ են, իսկ 190-ը՝ աղջիկներ : Սովորողների ընդհանուր առաջադիմությունը կազմել է 100%, որակը ՝ 43.3% (գերազանցիկ աշակերտների թիվը՝ 83, հարվածային աշակերտների թիվը՝103 , ընդամենը՝ 178 աշակերտ):

2022-2023ուստարում դպրոցում սովորում է 387 աշակերտ ,որից 191 -ը աղջիկ, 196 -ը՝ տղա, առաջին դասարանցիների թիվը 38 է: Դպրոցում աշխատում են 39 ուսուցիչներ , 3-ը ՝վարչական: Միջնակարգ մասնագիտական կրթություն ունեն 3 ուսուցիչներ, մյուսները ՝բարձրագույն –մանկավարժական:

Դպրոցն ունի ուսումնադաստիարակչական աշխատանքների պլան , ուր մեծ տեղ է հատկացված ներդպրոցական վերահսկողությանը : Փոխտնօրեններն ու դասղեկները , գրադարանավարը , դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչը, զինղեկը աշխատում են համապատասխան պլաններով : Դպրոցի ուսումնական պլանը կազմվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հատկացված օրինակելի ուսումնական պլանի հիման վրա և հաստատված մանկավարժական

խորհրդի նիստում : Դպրոցում առկա են բոլոր առարկաների պետական ծրագրերը: Աշակերտներն ապահոված են դասագրքերով: 2022-2023 ուստարում գործածության մեջ է եղել ուսուցիչների բաց թողած և փոխարինած ժամերի մատյանը, կատարվել է աշակերտների հաշվառում: 120-200 ժամ բացակայած աշակերտներ չկան : Պարտուսից դուրս մնացած աշակերտներ չկան : Դպրոցում մեծ ուշադրություն է դարձվել ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման խնդիրներին , ուղղություններին , այն է՝ պարտադիր ուսուցման իրականացման ներդպրոցական վերահսկողության , ուսուցիչների հետ տարվող աշխատանքի , դպրոցի տարբեր օղակների գործունեության համակարգման , մանկավարժական կոլեկտիվին ծնողների համագործակցության , սովորողների կյանքի և առողջության պահպանման , դպրոցի ուսումնանյութական բազայի ամրապնդման , մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրման , ընդհանրացման ու ներդրման հարցերը:

Սպիտակի N1 հիմնական դպրոցի մանկավարժները անցած ուստարում ապահովել են կրթական ծրագրերի կատարումը, հանրակրթական պետական չափորոշիչներով որոշվող ծրագրերի նվազագույնի յուրացումը սովորողների կողմից: Անցած ուստարում դպրոցի մանկավարժական խորհուրդը հրավիրել է նիստեր, որտեղ քննարկված շատ հարցերից կարևոր են սովորողների գիտելիքների որակի , դասավանդման և դաստիարակչական միջոցառումների , ներդպրոցական աշխատանքներում համայնքին ծնողի ներգրավման , ներառական կրթության մասին հարցեր և այլն:

Դպրոցն ուներ դասացուցակ , որը համապատասխանել է օրինակելի ուսումնական պլանին: Բոլոր ուսուցիչները ապահոված էին ուսումնական ծրագրերով , կազմվել է թեմատիկ պլաններ, քննարկվել առարկայական մեթոդմիավորումների նիստում, հաստատվել : Ուսուցիչների , դասղեկների , դասվարների կողմից էլեկտրոնային մատյանների վարումը կատարվել է գործող կարգին համապատասխան:Դպրոցը ստացել և ժամանակին ուսուցիչներին է բաշխել ուսուցչի ձեռնարկներ, աշակերտներին՝ վարժակալական գրքեր:Ուսումնադաստիարակչական աշխատանքներում հատուկ ուշադրություն է դարձվել երիտասարդ և սկսնակ ուսուցիչների աշխատանքին , իրականացվել է տնօրինության կողմից վերահսկողություն դպրոցական

բոլոր օղակների  աշխատանքներում: Ստուգվել և վերահսկվել են ծրագրերով նախատեսված թեմատիկ և  օրացուցային պլանները  ուսումնական  բոլոր  առարկաներից , պետական  ծրագրերի  կատարողականը , ուսուցչի  անհատական  աշխատանքը ընտրովի  դասարաններում : Ժամանակ առ ժամանակ ընդհանուր  վերահսկողության   է  ենթարկվել մի խումբ ուսուցիչների աշխատանքը ,  ստուգվել  դասամատյանները , գրանցվել  դիտողություններ : Ուսումնասիրվել է  նախորդ տարվա ետ մնացող , հարվածային և գերազանց սովորող աշակերտների առաջադիմությունը ,   տրվել են գրավոր աշխատանքներ ,  վերահսկվել  բոլոր դասարաններում կիսամյակային  ամփոփիչ  գրավոր  աշխատանքների  անցկացման  կարգը ,  անց են կացվել նպատակային դասալսումներ:Տարվա ընթացքում    առարկայական մեթոդմիավորումների կողմից
կազմված ժամանակացույցով   կազմակերպվել են դաս միջոցառումներ,   օրինակելի (բաց) դասեր,  ուսումնասիրվել է առարկայի դրվածք: Թերություններ գրանցվել են առարկայական մեթոդմիավորման աշխատանքներում , ծնող- ուսուցիչ- աշակերտ կապի աշխատանքներում,  աշակերտների անհարգելի բացակայությունների  և բացակայած աշակերտների՝  հետագայում  գրված ձևական գրավոր աշխատանքների  հարցերում :
Թերություններ են արձանագրվել մատենավարության աշխատանքներում: Շատ չեն  գնահատականները հատկապես միավորային գնահատման <<բանավոր հարցում>> տեսակից:  <<Տնային հանձնարարություն>>բաժնում թերի են գրանցումները:
Դպրոցում առարկայական օլիմպիադայի  մարզային փուլում գրանցվեցին 6 մասնակիցներ:
ա) Ռուբեն Թովմասյանը <<Մաթեմատիկայից>> 18 միավոր,
բ) Ստյոպա  Դիլբարյանը <<Պատմությունից>> 17 միավոր, <<գրականությունից>> 12.5 միավոր, <<անգլերենից >> 16.3  միավոր
գ) Վահե Եղիազարյան <<ՀԵՊ>> 18,6 միավոր
դ)  Գրետա Դավթյան <<ՀԵՊ>> 16,5 միավոր
Հանրապետական փուլ են անցել  3 աշակերտ 4 առարկայից՝
ա) Վահե Եղիազարյան <<ՀԵՊ>> առարկայից ստացել է 1 գովասանագիր
բ) Ստյոպա  Դիլբարյանը <<Պատմությունից>> ստացավ գովասանագիր ,  իսկ <<գրականությունից>> պարգևատրվեց երկրորդ կարգի դիպլոմով
գ ) Ռուբեն Թովմասյանը  հրավեր ստացավ Շահինյանի անվան ֆիզմաթ  դպրոցից օլիմպիականների ճամբարին մասնակցելու:
Արդյունքում ուսուցիչներին և  աշակերտներին մարզպետի կողմից  հանձնվեցին շնորհակալագրեր:
5ա դասարանի աշակերտ  Ռուբեն Թովմասյանը  <<Մեղու 2022>>  հայերենի մրցույթում  արժանացավ << հաղթող >> մրցանակի, <<կենգուրու 2022>> միջազգային մաթեմատիկական մրցույթում << լավագույն>> մրցանակի:
ՎՊՄՀ-ում  անցկացված  ասմունքի  մրցույթում  Տիգրան  Խաչատրյանը զբաղեցրել է II տեղը:
Դպրոցում ողջ անձնակազմը աջակցել է տնօրինությանը կրթական գործը նպատակին հասցնելու  համար:
Դպրոցի լավագույն ուսուցիչների վարած դասերը ունեցել են բարձր մակարդակ,  ժամանակակից մոտեցում ,   ուսուցանելու, դաստիարակելու  ուրույն տեսակետ ,   ստեղծագործական ազատություն:

Դաստիարակչական գործընթացը լավագույն ձևով կազմակերպելու համար վեր է հանվել լավ ու

թերի աշխատանքների արդյունքները, գովասանքի է արժանացել տարվա լավագույն դասարանը, դասղեկը: Դպրոցի լավագույն

դասղեկները ՝ Արմինե Սամվելյանը ,Սուսաննա Մանուչարյանը, Իրինա Սահակյանը, , Գայանե Հարությունյանը, Միլենյա Դիլբարյանը , Մարինե Թաղևոսյանը, Ալվարդ Սարգսյանը, սիրով ու նվիրումով են կատարել

իրենց վստահված աշխատանքը, շատերն էլ դասղեկի աշխատանքը դիտում են որպես իրենց անցած տարիների

լավագույն աշխատանքի ավարտված ձև, բավարարվում են ձեռք բերված վաստակով: Եղել են նաև այլ թերացումներ.

Որոշ ուսուցիչները խուսափել են կազմակերպել միջոցառումներ, վարել բաց դասեր , չեն կատարել փոխադարձ դասալսումներ , չեն ցանկացել ներկայացնել իրենց լավագույն առաջավոր փորձը: Դպրոցն ունի համակարգիչներով կահավորված ինտերնետ – համակարգչային սենյակ, ՙ<<Արմաթ >> լաբորատորիա ,ՙքիմիայի , ֆիզիկայի լաբորատորիաները կարիք ունեն համապատասխան սարքավորումների , դիդակտիկ

Պարագաների և քիմիական նյութերի: Տարեցտարի ավելանում է չառաջադիմող աշակերտների թիվը, գերազանց սովորող աշակերտների թիվը նվազել է նաև տարրական և միջին դասարաններում: Եվ՛ դպրոցի և՛ քաղաքի գրադարանները հաճախող աշակերտների թիվը անհամեմատ քիչ է , ավելացել է երաժշտական , նկարչական, մարզական դպրոցներ հաճախող աշակերտների թիվը:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը ղեկավարող տնօրինությունը իր առջև խնդիր է դրել անցած ուստարվա

աշխատանքներում տեղ գտած թերությունները վերացնել , մշակել , աշխատանքի կատարելագործման նոր ուղիներ և

իրականացնել նոր ուստարում:

| | Աշխատանքի բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարող անձ | Նշումների կատարմանմ ասին |
|---|---|---|---|---|
| 1 | ՈՒսումնական տարվա ընթացքում դպրոցը ղեկավարվում  է Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցի օրինակելի կանոնադրության   հիման վրա կազմած դպրոցի կանոնադրությամբ:<br>ըստ որի<br>ա)հիմնական դպրոցն անընդհատ կրթության համակարգի հիմնական օղակն է ,  որը բոլոր քաղաքացիների համար հնարավորություն  է ընձեռնում Հայաստանի Հանրապետության սահմանադրությամբ երաշխավորված իրենց կրթության իրավունքը իրականացնել<br>բ)սովորողների մտավոր,  հոգևոր զարգացման ,  նրանց ունակությունների համակողմանի բացահայտման  և  ազգային մտածելակերպի ձևավորման համար :<br>գ)սովորողները պետք  է  կրթություն ու դաստիարակություն ստանան իրենց մայրենի լեզվով , իսկ այլ լեզուների ուսուցումը պետք  է  կատարվի մայրենի լեզվի խոր իմացության հիմքի վրա մտահոգվելով դպրոցում ուսուցանող օտար լեզուների `  անգլերենի  և  ռուսերենի ուսուցման հարցով  և  այդ լեզուների դասավանդումը պահելով պատշաճ մակարդակի վրա, քանի որ յուրաքանչյուր շրջանավարտ ցանկության դեպքում ուսումը կարողանա շարունակել նաև հանրապետությունից  դուրս: | տարվա  ընթացքում | Տնօրինություն,  մեթոդմիավորման նախագահ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 2<br><br><br><br>3 | դ)ուստարվա ընթացքում պատշաճ հսկողություն սահմանել ամեն մի սովորողի ուսման, դաստիարակության ընթացքին ամբողջությամբ `  բարձրացնելով սովորողների և ուսուցիչների պատասխանատվությունը: Ստուգման արդյունքներով անկողմնակալ գնահատել աշակերտի ուսման գործընթացը  և ուսուցչի  աշխատանքը:<br>ե)դպրոցում դասավանդող լեզուն գրական հայերենն  է: | տարվա ընթացքում | | |

| 1 | 2 | 3 | 4 | 5 |
|---|---|---|---|---|
| | Աշխատանք սովորողների կրթության իրականացման ուղղությամբ<br>1. Հաշվառել տարածքի 5,8-15 տարեկան տղաներին և աղջիկներին և նրանց ընդգրկել ուսման մեջ:<br>2. Ցուցակագրել 3-5,6 տարեկան երեխաներին:<br>3. ՈՒշադրության կենտրոնում պահել սոցիալապես անապահով, անբարենպաստ ընտանիքների և հաշմանդամություն ունեցող երեխաների հետ տարվող աշխատանքների վիճակը:<br>4. Աշխատանք տանել երեխաների շրջանում պարտուսից դուրս չմնալու ուղղությամբ :<br>5. Պարտադիր ուսուցման իրականացման մասնակից դարձնել ծնողներին , դպրոցի կառավարման խորհրդին:<br>6. Խիստ վերահսկողություն սահմանել սիստեմատիկ ուշացումների և անհարգելի բացակայողների նկատմամբ , ժամանակին կանխել դրանք:<br><br>7. Աշակերտներին , ըստ նրանց ընդունակությունների ու հետաքրքրությունների , ընդգրկել դպրոցի, քաղաքի արտադպրոցական խմբակներում , ակումբներում: | 8-10.08<br>22-25.08<br><br><br><br><br><br><br><br><br>սեպտեմբեր | տնօրինություն, ամրացված ուսուցիչներ<br><br><br>անհրաժեշտու-թյան դեպքում<br><br><br><br><br><br>դասվար , դասղեկ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | II բաժին<br>Աշխատանք մանկավարժական կոլեկտիվի հետ, նրանց որակավորման բարձրացում<br><br>1. Նշանակել դասղեկներ նառարկայական մեթոդմիավորման ղեկավարներ: Անցկացնել մեթոդմիավորման ղեկավարների համար սեմինար խորհրդակցություն:<br>2. Ծանոթացնել ՀՀ հանրակրթական հիմնական ընդհանուր ծրագիր իրականացնող հանրակրթական ուսումնական հաստատություններում գնահատման համակարգի կիրառման վերաբերյալ մեթոդական ցուցումներ:<br>3. Անցկացնել մասնախմբերի ղեկավարների սեմինար խորհրդակցություն : Նրանց ծանոթացնել մասնախմբերի կանոնադրությանը, որոշել հետագա անելիքները:<br>4. Դպրոցում կազմակերպել մանկավարժության տարիքային հոգեբանության մշտական գործող սեմինար ուսուցիչների կոնկրետ խմբերի համար:<br>5. Դասղեկների աշխատանքը կատարելագործելու նպատակով դպրոցում ստեղծել մեթոդմիավորման մասնախումբ:<br>6. Պլանավորել մ/մ գործունեությունը:<br>7. Ուսումնասիրել առաջավոր աշխատանքի փորձը և տարածել դպրոցում:<br>8. ՌԻսուցիչներին ընդգրկել վերապատրաստման, վերաորակավորման և ատեստավորման դասընթացներին :<br>9. Դասալսումների միջոցով մեթոդական օգնություն ցույց տալ դպրոցի բոլոր մանկավարժներին:<br>10. Հատուկ ուշադրություն դարձնել սկսնակ ուսուցիչներին:<br>11. Կազմակերպել սկսնակ ուսուցիչների ստաժավորման գործը, նրանց կցել փորձառու, որակյալ ուսուցիչների:<br><br> | **22-30.08**<br><br>**1-10.08**<br><br>ուստարվա ընթացքում | տնօրինություն<br><br>փոխտնօրեն հոգեբան<br><br>տնօրեն փոխտնօրեն | Կատարված է |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 12. Ուսուցիչների համար կազմակերպել դասախոսություններ , սեմինարներ, կոնսուլտացիաներ :<br>13. Ուսուցիչներին ծանոթացնել , հաղորդակից դարձնել գիտության , մանկավարժության նորագույն նվաճումներին:<br>14. Մեթոդմիավորումների նախագահների նշանակում:<br>ա/ Դանիելյան Ա. - ֆիզմաթ<br>բ/Գյուլազյան Կ .- կենսաքիմիա+միացյալ առարկաներ<br>գ/Հարությունյան Գ.- հումանիտար<br>դ/Մանուչարյան Սուսաննա.- տարրական դաս. մ/մ | **29-31.08**<br><br>**14-25.08** | փոխտնօրեն<br><br>տնօրեն | |

# Դաստիարակչական աշխատանքների կազմակերպում

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1<br><br>2 | Անցկացնել սեմինար պարապմունքներ , դասղեկների խորհրդակցություններ, օգնել դասղեկներին՝ Ժամանակին կազմելու կիսամյակային , տարեկան աշխատանքային պլաններ, հետևել նախատեսված միջոցառումների կատարմանը:<br>Ստեղծել <<Հանցագործությունների կանխարգելման միջոցառումները համակարգող հանձնաժողով>>՝<br>նախագահ՝ 1. Մ.Ավետիսյան /տնօրեն/<br>անդամներ՝ 2. Գ. Գասպարյան /փոխտնօրեն/<br>3. Անժելիկա Դանիելյան / ուսուցչի օգնական/<br><br>Անչափահասների շրջանում պետության , կրոնի, հավատքի նկատմամբ ճիշտ դիրքորոշման ձևավորման համար անցկացնել զրույց-զեկուցումներ: | 15-29.09<br><br>հոկտեմբեր | կազմակերպիչ<br><br>տնօրեն<br>կազմակերպիչ | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 4 | Աշակերտների համար կազմակերպել մարզական, մշակութային միջոցառումներ ,ներկայացումներ | | | |
| | կինոդիտումներ, էքսկուրսիաներ , այցելություններ , թատրոններ , թանգարաններ, | ուստարվա | կազմակերպիչ | |
| | պատկերասրահներ, | ընթացքում | դ/ա. կոլեկտիվ | |
| 5 | եկեղեցիներ: | | | |
| | Դպրոցականների շրջանում իրավախախտումների կանխարգելման նպատակով ապահովել սերտ | | | |
| | Համագործակցություն <<Երեխաների իրավունքների պաշտպանության>>և ոստիկանության | | | |
| 6 | անչափահասների բաժնի , վերականգնողական կենտրոնի հետ: Անցկացնել զրույց՝ | | տնօրեն | |
| | <<Իրավախախտումները անչափահասի կողմից և կանխարգելման միջոցները>>: | | | |
| 7 | Կազմակերպել երկխոսության հանդիպումներ՝ | | | |
| | աշակերտ – ուսուցիչ | տարվա | կազմակերպիչ | |
| | ուսուցիչ – ծնող | ընթացքում | դ/ա. կոլեկտիվ | |
| | ծնող – ուսուցիչ | | կազմակերպիչ | |
| | Թեման՝ ա/ արժանապատվություն | | | |
| | բ/ իրավական | | | |
| | գ/ ընթերցանություն | | | |
| 8 | դ/ դպրոցի շենքի գույքի պահպանություն | | զինղեկ | |
| | Կազմակերպել հանդիպումներ հայկական բանակի հրամանատարական կազմի , | | | |
| | 44-օրյա պատերազմին մասնակցած զինվորների , արվեստի, գիտության, քաղաքական | | | |
| | գործիչների հետ: | | | |
| | Մասնակցել 2023թ-ի նախազորակոչային տարիքի երիդասարդության համար կազմակերպած | 18-21.09 | | |
| 9 | ռազմամարզական խաղերին: | տարվա | տնօրինություն | |
| | Անցկացնել ցերեկույթներ, մարզական միջոցառումներ (Ֆուտբոլ, շախմատ) նվիրված ՀՀ և ԼՂՀ | ընթացքում | դասղեկ | |
| | անկախությանը: | | | |
| | Կազմակերպել ինտելեկտուալ մրցույթ բարձր դասարանի աշակերտների միջև: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 10<br><br><br>11<br><br>12<br><br>13<br><br>14<br>15<br><br>16<br><br>17<br><br><br>18<br><br>19 | Կազմակերպել ցերեկույթ՝ <<Իմ հայրենիքը Հայաստանն է >>:<br>Կազմակերպել համադպրոցական միջոցառումներ ՝ նվիրված Նոր տարվան և Ծննդյան տոներին ՝ 1-4 –րդ դասարանների աշակերտների համար ՝<<Տոնածառ>> , միջին և բարձր դասարանների Աշակերտների համար ՝ <<Ամանորի>>հանդեսներ:<br>Դպրոցի միջանցքներում , գրադարանում , կաբինետներում , դասարաններում ձևավորել՝<<Դպրոցի տարեգրությունը>> , <<Մենք>>, <<Հիշարժան տարեթվեր>>խորագրերով ստենդեր:<br>Կազմակերպել միջդասարանային , համադպրոցական , համաքաղաքային մրցումներ, սպարտակիադաներ, սպորտլանդիաներ, օլիմպիադաներ:<br>Սիստեմատիկ կազմակերպել սանիտարական օրեր , շաբաթօրյակներ:<br>Հոգեբանական շեղում ունեցող աշակերտների հետ հաճախակի անցկացնել զրույցներ՝ <<Աղանդը դպրոցում>> թեմայով, խորհրդատվություններ հոգեբանի միջոցով:<br>Հանդիպում ՆԳ բաժնի անչափահասների տեսչության աշխատակիցների հետ, բժշկի հետ. զրույցի թեմաներ ՝ ՁԻԱՎ, ՄԻԱՎ, թմրամոլություն , ալկոհոլ , ծխախոտ, սեռական դաստիարակություն:<br>Դպրոցում կազմակերպել գեղարվեստական , առարկայական օլիմպիադաներ, ցուցահանդեսներ, Մասնակցություն ունենալ քաղաքային , մարզային միջոցառումների , փառատոների:<br>Ապահովել 12-14 տարեկան աշակերտների մասնակցությունը <<Կենգուրու>>, <<Медвежонок>>, <<Մեղու>> ինտելեկտուալ մրցույթների:<br><br>Օգտագործելով համացանցի հնարավորությունը ՝ ստեղծել ցուցասրահ ՝ ՀՀ և ԼՂՀ անկախությանը նվիրված:<br><<Մեր մեծերը>> խորագրով կազմակերպել միջոցառումներ՝ Հայ կինոյի 100-ամյակին, Սերգեյ Փարաջանովի 100-ամյակին, Հովհաննես Շիրազի 110-ամյակին, Պ. Սևակի 100-ամյակին,Վիկտոր Համբարձումյանի – 115- ամյակին, գրականագետ Էդուարդ Ջրբաշյանի 100-ամյակին: Լավագույն նյութերը տեղադրել www.hayernaysor.am էլեկտրոնային թերթում և Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N 1 հ/դ-ի կայքէջում: | 19 -25.09<br><br><br>22 -29.12<br><br>Տարվա ընթացքում<br><br>Հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, նոյեմբեր, դեկտեմբեր Ընտրովի օրերի ընթացքում<br><br><br>Տարվա ընթացքում | ԴԱԿ<br>(Վ. Միրզոյան)<br><br>Դասվարներ կազմակ.<br><br>Տնօրեն<br>Ջինդեկ<br>Փոխտնօրեն<br><br>Բուժքույր, կազմակ., հոգեբան<br><br>Տնօրեն, բուժքույր, կազմակ.<br><br>Ա. Դանիելյան<br>Ռ. Դավթյան<br>Տնօրինություն, դասղեկներ<br><br>Դասղեկներ, գրադարանավար<br><br>Ա.Թովմասյան<br>Վ.Միրզոյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 20 | Կազմակերպել թեմատիկ ցերեկույթներ , ասմունքի մրցույթներ, նկարչական և ձեռքի | Փետրվար, մարտ, | Դասղեկներ, դասվարներ | |
| | աշխատանքների | ապրիլ | | |
| | Կազմակերպել հետաքրքիր , բովանդակալից , ուսանելի միջոցառումներ՝ նվիրված հունվարի 28-ին , | | | |
| 21 | մարտի 8-ին , մայիսի 9-ին , 44-օրյա պատերազմի հերոսների հիշատակին: | 06.03<br>26 .01 | Զինղեկ<br>Տնօրինություն | |
| | Անցկացնել զրույցներ երկրաշարժի ծանր հետևանքների մասին , լուսաբանել առաջավոր երկրների | 18.09 | | |
| 22 | փորձը սեյսմիկ վտանգի ժամանակ աշակերտների պահվածքի շուրջ: <<Տագնապ>> միջոցառման | 04.12 | | |
| | անցկացում Սպիտակի հրշեջ ծառայության հետ : | Տարվա ընթացքում | հոգևոր հովիվ, | |
| | Զրույցներ կազմակերպել դպրոցի բոլոր դասարանների աշակերտների շրջանում . | | Ա. Թովմասյան | |
| 23 | Թեման՝ <<Սուրբ Վարդան զորավար և 1036 սրբերի հիշատակության օր>>: | | մ/մ նախ. Հարությունյան | |
| | Ազգային կրոնի և հավատքի նկատմամբ ձևավորել ճիշտ դիրքորոշում : <<Զրույց՝ աղանդավորական | Նոյեմբեր- ապրիլ | Գ.<br>գրադարանավար | |
| 24 | շարժման մասնակից աշակերտների հետ>>: | | | |
| | Աշնան և գարնան որոշակի օրերի անցկացնել շաբաթօրյակներ , բարեկարգել դպրոցի բակը, հարակից | Տարվա ընթացքում | գրադարանավար | |
| 25 | տարածքը , կանաչապատել , ծառ տնկել, կազմակերպել <<Ոսկե աշուն>> համադպրոցական բերքի | | դասղեկներ, դասվարներ | |
| | տոն: | 06.10 | Դասղեկներ, | |
| 26 | Կազմակերպել հանդիպումներ դպրոցի վաստակաշատ ուսուցիչների , շրջանավարտների հետ: | | Վ. Միրզոյան | |
| | Բաժանորդագրվել թերթերի , ամսագրերի , լույս ընծայել <<Բողբոջ>> խորագրով աշակերտների և | | | |
| 27 | ուսուցիչների ստեղծագործությունների պատի թերթ: | | | |
| | Վերահսկել գրադարանի աշխատանքները. Ստեղծել <<Հնամենի դպրոց թիվ 1>>անկյուն , | | | |
| 28 | ուսումնասիրել, մասսայականացնել դպրոցի տարեգրությունը , անցած ուղին: | | | |
| 29 | Կազմակերպել ընթերցանությանը նվիրված մրցույթ , ակտիվացնել և խթանել աշակերտների | | | |
| | գործունեությունը <<Գիրքը իմ բարեկամն է>>թեմայով և | | | |
| | հանձնարարել ստեղծագործական շարադրություն բոլոր դասարաններում: | | | |
| 30 | Դասագրքերի բաշխում , վնասված գրքերի վերանորոգում: | | | |
| | Կազմակերպել Մարտիրոս Սարյանի կտավների ցուցահանդես(աշակերտների արտանկարներ) | | | |
| 31 | <<Շնորհավոր տոնդ , ուսուցիչ >> ցերեկույթ 5-9-րդ դասարանների աշակերտների համար: | Դեկտեմբեր | Գ. Գասպարյան | |
| 32 | | 05.10 | Դասղեկներ,<br>Գ. Գասպարյան<br>Վ. Միրզոյան | |

# IV ԲԱԺԻՆ

## Աշխատանք ծնողների հետ

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1<br><br><br><br>2<br><br><br><br>3<br><br>4 | Հրավիրել դասարանական , դպրոցական , ծնողական ժողովներ, ընտրել խորհրդի անդամներ, նախագահներ:<br><br>Նախապատրաստել և անցկացնել ընդհանուր ծնողական ժողովներ, քննարկել դպրոցի առջև դրված համատեղ լուծման ենթակա հարցեր<br>Նիստերում քննարկել `<br>ա)դպրոցի ուսումնանյութական բազայի հարստացման<br>բ)սոցիալապես անապահով , կարիքավոր աշակերտներին օգնություն կազմակերպելու հարցեր:<br>Ծնողներին մասնակից դարձնել արտադպրոցական դաստիարակչական բոլոր աշխատանքներին, միջոցառումներին , էքսկուրսիաներին:<br>Ծնողների համար ստեղծել տեղեկատվական կենտրոն ` 2023-2024 ուստարվա քննական կարգը ուսումնասիրելու համար: | 1-8.10<br><br><br><br>Տարվա ընթացքում<br><br><br><br>մայիս | Տնօրեն ,<br>Կազմակերպիչ<br><br><br>Ծնողկոմիտե ,<br>Կազմակերպիչ<br><br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան | |

## V ԲԱԺԻՆ

## ՌԻսումնադաստիարակչական աշխատանքների համակարգում

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Ուսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով, ուսուցչի ձեռնարկով: | 22-27.08 | Գրադարանավար | |
| 2 | Ուսումնական առարկաների դասավանդումը բարելավելու նպատակով կատարելագործել ուսուցիչների համակարգչային կրթությունը , կաբինետային համակարգը , հարստացնել դպրոցի ուսումնանյութական բազան: | 15-20.08 | Տնօրինություն | |
| 3 | Հետևողական աշխատանք տանել աշակերտներին դասագրքերով ապահովելու ուղղությամբ : Սոցիալապես անապահով ու ծնողազուրկ , խնամքից դուրս մնացած աշակերտներին տրամադրել անվճար դասագրքեր ու պայուսակներ: | Տարվա ընթացքում | | |
| 4 | Սովորողների գիտելիքների որակը կատարելագործելու , բարելավելու նպատակով կատարել դասալսումներ , | | Փոխտնօրեն մ/մ | |
| 5 | բաց (օրինակելի) դաս ու փոխադարձ դասալսումներ , արդյունքները քննարկել մեթոդմիավորման նիստերում: Առարկայական մեթոդմիավորումների նիստերում քննարկել հետևյալ առարկաների դասավանդման վիճակը , դրվածքը. | Դեկտեմբեր, փետրվար,նոյեմբեր , հոկտեմբեր ապրիլ հունվար | Տնօրեն , փոխտնօրեն մ/մ նախագահ | |

| | ֆիզմաթ | կենսաքիմիա | հումանիտար | տարրական |
|---|---|---|---|---|
| Սեպտեմբեր | | | | Մայրենի III, IV |
| Նոյեմբեր | ԵրկրաչափությունVIII | Կենսաբանություն VIII | Հայոց լ. VII | Մայրենի III, IV |
| Դեկտեմբեր | Մաթեմատիկա V, VI | Բնագիտություն V, VI | Մաթեմատիկա VIII,IX | Շախմատ IV |
| Հունվար | Հանրահաշիվ VII, VIII | Հայրենագիտություն V | Ռուսաց լ. V,VII | Մաթեմատիկա I, II |
| Փետրվար | Ֆիզիկա VIII | | Անգլերեն V,VI | Շախմատ II, II |
| Մարտ | Երկրաչափություն VII | Կենսաբանություն IX | Մայրենի V, VI | Մայրենի I ,II |
| Ապրիլ | Ֆիզիկա VII | Ես և շրջակա աշխարհ II, IV | Գրականություն VIII | Տառաճանաչություն I ա, I բ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **6**<br><br>**7**<br><br>**8**<br><br>**9**<br><br>**10**<br>**11**<br><br>**12**<br><br>**13** | Ուսումնասիրել մայրենիի, մաթեմատիկայի դրվածքը 1-4-րդ դասարաններում, հատուկ ուշադրություն դարձնել ծրագրերի կատարողականին և յուրացման որակին :<br>Կազմակերպել և անցկացնել դպրոցական առարկայական օլիմպիադաները (տե՛ս փոխտնօրենի կազմած աշխատակարգը):<br>Հատուկ ուշադրություն դարձնել VIII,IX դասարանների առարկայական ծրագրերով, չափորոշիչներով, դասագրքերով նախատեսված առարկաների ուսուցմանը , յուրացմանը:<br>Կիսամյակային գրավոր աշխատանքների անցկացման վերահսկողություն սահմանել՝ ուշադրություն դարձնելով բացակա աշակերտների ՝ լրացուցիչ աշխատանք անցկացնելու կարգի պահպանմանը:<br>Մեծ ուշադրություն և օժանդակություն ցուցաբերել ՆԶՊ առարկայի կաբինետում անցկացվող դասերին :<br>Համալրել ցուցադրական ագիտացիան , պատրաստել նոր ցուցափեղկեր՝ նվիրված 44-օրյա պատերազմի հերոսներին:<br>Անցկացնել միջոցառում <<Նվիրյալները>>խորագրով:<br>Հայրենասիրության, հայրենիքի պաշտպանի վսեմ գաղափարների քարոզման աշխատանքների ակտիվացում սովորողների շրջանում փորձառու զինծառայողների և վետերանների ներգրավում:<br>Ցերեկույթ՝ ՀՀ բանակի կազմավորմանը նվիրված: | 5-26.12<br>Տարվա<br>ընթացքում<br><br>24 նոյեմբեր<br><br>29.01 | Տնօրինություն, զինղեկ ,մեթոդմիավորման նախագահ, մ/մ նախագահ | |

## VI ԲԱԺԻՆ

## Ներդպրոցական վերահսկողություն

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1<br><br><br><br>2<br><br>3<br><br>4<br><br>5<br><br>6<br><br>7<br>8<br><br>9 | Ավարտական դասարանների սովորողների գիտելիքներին, կարողություններին ծանոթանալու նպատակով թեմատիկ աշխատանքներով վերահսկել հայոց , ռուսաց լեզուներից, մաթեմատիկայից և<br>բնագիտական առարկաներից անցկացված կիսամյակային գրավոր աշխատանքները , արդյունքները<br>քննարկել մեթոդմիավորումներում:<br>Տարեկան 2 անգամ (դեկտեմբեր , մայիս) վերահսկել կիսամյակի գրավոր աշխատանքների անցկացման ընթացքը:<br>Տարեկան 2 անգամ ստուգել ավարտական դասարանների սովորողների գիտելիքների որակի համապատասխանությունը պետական չափորոշիչների նորմերին :<br>Ստուգել 4-րդ, 9-րդ դասարաններում հայոց, ռուսաց լեզուներից և մաթեմատիկայից տրվող թեմատիկ<br>աշխատանքների քանակը և որակը,արդյունքները քննարկել մեթոդմիավորումների նիստերում:<br>Ստուգել ուսումնական ծրագրերի կատարողականը քանակական և որակական տեսակետից և արդյունքները քննարկել մանկավարժական խորհրդում:<br>Ստուգել դասամատյանների վարման վիճակը , հետևողական լինել թերությունների վերացման համար:<br>Ստուգել դժվարությամբ առաջադիմող աշակերտների վարքը և ուսման առաջադիմության վիճակը,<br>արդյունքները քննարկել դաստեկների և ծնողների հետ:<br>Հետևել աշակերտների գնահատականների՝ օրենքով պահանջվող խտությանը:<br>Հետևել նախորդ տարվա գերազանցիկների առաջադիմության շարժընթացին: | դեկտեմբեր<br><br>դեկտեմբեր, մայիս<br><br>նոյեմբեր,<br>փետրվար, մարտ<br><br>տարվա<br>ընթացքում | տնօրեն<br><br>փոխտնօրեն | մ/մ նախագահներ |

## VII ԲԱԺԻՆ

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Ֆինանսատնտեսական գործունեության և ուսումնանյութական բազայի ամրապնդում: | սեպտեմբեր հունվար | տնօրեն հաշվապահ տնտեսվար | |
| 2 | Կազմել տարիֆիկացիա, բյուջետային հատկացումների փաստաթղթերի ծախսերի նախահաշիվ, փաստաթղթերը ներկայացնել մարզպետարանի ֆինանսական բաժանմունք: | | | |
| 3 | Աշխատանք տանել դպրոցական գույքի , սարքավորումների , ուսուցմանտեխնիկական միջոցների, դիդակտիկ այլ նյութերի օգտագործման և պահպանման ուղղությամբ: | | | |
| 4 | Կատարել դպրոցի հաշվեկշռում եղած գույքի և սարքավորումների հաշվառում: | տարվա ընթացքում | տնօրեն տնտեսվար | |
| 5 | Ապահովել շենքի ջերմային, լուսային , օդային ռեժիմը: Կանոնավոր վիճակում պահել հակահրդեհային միջոցները: | | | |
| 6 | Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը , մարզահրապարակը , հետևել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը: | | | |

## VIII ԲԱԺԻՆ

### Կազմակերպչական մանկավարժական միջոցառումներ

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| 1 | Կատարել աշխատանքի բաժանում դպրոցի ղեկավարների միջև: | 21-25.08 | տնօրեն | |
| 2 | Կոմպլեկտավորել դասարանները: | 25-30.08 | տնօրեն | |
| 3 | Սահմանել աշխատանքի ռեժիմ: | | | |
| 4 | Նշանակել դաղեկներ և դասվարներ: | 25-31.08 | տնօրեն փոխտնօրեն | |
| 5 | Նշանակել ուսումնական կաբինետների վարիչներ, հաստատել տնօրենի հրամանով մինչև տարիֆիկացիայի կազմելը: | | | |

## Մանկավարժական խորհրդի գործունեություն

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|
| | **I նիստ**<br>1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>2. Օգոստոսի 20-30-ի վերաքննությունների (լրացուցիչ քննությունների) հանձնաժողովների և ժամանակացույցի հաստատում զեկուցող՝ տնօրեն)<br>3. 2022-2023 ուսումնական տարվա հանրակրթական ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի կազմի հաստատում և մանկավարժական խորհրդի քարտուղարի ընտրություն (զեկուցող՝ տնօրեն)<br>4. 2022-2023 ուսումնական տարվա դասաբաշխման և դպրոցի ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի բաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>5. Դպրոցի 2022-2023 ուսումնական տարվա ուսումնական պլանի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>6. Ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>7. Դասագրքերի բաշխման ընթացքի մասին (զեկուցող՝ տնօրեն, գրադարանավար)<br>8. ՈՒսումնական հաստատության աշխատանքային շաբաթվա տևողության և աշխատանքային ռեժիմի հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>9. Հաստատության ներքին գնահատման հաշվետվության քննարկում (զեկուցող՝ տնօրեն) | **18.08.2022թ.** | Մ. Ավետիսյան<br><br>Մ. Ավետիսյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Դիլբարյան<br><br>Մ. Ավետիսյան | |
| | **II նիստ**<br>1. Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում:<br>2. Նախորդ նիստի որոշումների կատարման ներկայացում: (զեկուցող՝ տնօրեն)<br>3. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակի դասացուցակի հաստատում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի տեղակալ):<br>4. Մեթոդական միավորումների կազմավորում՝ ըստ ուսումնական բնագավառների և նախարարության կողմից հաստատված ուսումնական հաստատության ֆինանսավորման կարգի:<br>5. Դասարանների կազմավորման մասին տեղեկանքի ներկայացում:(զեկուցող՝ տնօրեն)<br>6. Աշխատողների կազմած ԱՈՒՊ-ի օրինակելի ձևի 1-7.1 կետերը ներառյալ լրացված մասի հաստատում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ) | **31.08.2022թ** | Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Վարդանյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **19**<br>**III Նիստ**<br><br>1.Մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում.անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2.«ՀՀ Լոռու մարզի Սպիտակի Ա. Մյասնիկյանի անվան N 1հիմն.դպրոց» ՊՈԱԿ-ի 2023 թ. բյուջեի նախագծի մասին (զեկուցող՝ տնօրեն)<br>3.Առանց ներդրման պետության կողմից տրամադրվող դասագրքերի վարձավճարների հատկացման և դպրոցի սոցիալապես անապահով սովորողների ցուցակի հաստատման հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալ, գրադարանավար)<br>4. Սոցիալապես անապահով և ծնողազուրկ երեխաների հաճախումներին և առաջադիմությանը օժանդակող աշխատանքների կատարում (զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ,)<br>5.Սեպտեմբերին կազմված Կրթության առանձնակատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ԱՈՒՊ-ների քննարկում և հաստատում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ)<br>6. Բնագիտական առարկաների (ֆիզիկա, քիմիա, կենսաբանություն, աշխարհագրություն) դասավանդման որակի բարձրացման խնդիրները ընթացիկ ուսումնական տարում հարցի քննարկում (ըստ ուսումնական հաստատության) (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ)<br>7.Օլիմպիադաների նախապատրաստական աշխատանքների հաստատում (զեկուցող՝ տնօրեն)<br>8. էլեկրոնային մատյանների գրանցման,գնահատման, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ)<br>9.ՈՒսումնական հաստատության տնօրինության նախաձեռնությամբ նոյեմբեր ամսին գրավոր աշխատանքների կատարման հարցը (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ) | 28.10.2022թ | Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Գասպարյան<br>Գ. Դիլբարյան<br><br>Գ. Գասպարյան<br><br>Գ. Վարդանյան<br>Ա.Ավետիսյան<br>Ա. Դանիելյան<br>Կ. Դանիելյան<br>Գ. Վարդանյան<br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Վարդանյան<br>Ս. Գրիգորյան<br>Ա. Դանիելյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **20**<br>**IVնիստ**<br><br>ՈՒսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. 2022-2023 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիարակչական աշխատանքների և սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>3. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների 1-ին կիսամյակի տարեկան պլանի կատարման մասին (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>4. Տնօրենի տեղակալների, մեթոդական միավորումների, դասղեկների, ուսուցչի օգնականների աշխատանքների արդյունավետության քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով,ՄԿԱ գծով տեղակալ )<br>5. 2022-2023 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակում դպրոցի ուսումնական պլանի քննարկում և դասաբաշխման հաստատում (զեկուցող՝ տնօրեն )<br>6. Ներդպրոցական առարկայական օլիմպիադաների արդյունքների ամփոփում և հաջորդ փուլի նախապատրաստում: Տարածքային փուլ անցած աշակերտների անվանացանկի հաստատում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>7. 2022-2023 ուսումնական տարվա առաջին կիսամյակին սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում, հաստատությունից սովորողի տեղափոխման ազատման և ընդգրկման (աշակերտների շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>**V նիստ**<br>1. Օրակարգի հաստատում, մանկավարժական խորհրդի 2023թ. դեկտեմբերին 28-ի կայացած նիստի որոշումների կատարողականի հաստատում (զեկուցող՝տնօրեն,փոխտնօրեն)<br>2. 2-րդ կիսամյակի ուսումնական պլանի քննարկում,հաստատում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>3. 1-ին կիսամյակի ուսումնադաստիարակչական աշխատանքների արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>4. Անհրաժեշտության դեպքում տնային ուսուցման կազմակերպում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,մ/մ) | 29.12.2023թ<br><br>10.01.2023թ | Մ. Ավետիսյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Գասպարյան<br>Գ. Վարդանյան<br><br>Մ. Ավետիսյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 21 | | | |

| | 1 | 2 | 3 | 4 |
|---|---|---|---|---|

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **VI նիստ**<br>Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքների ամփոփում և մարզային փուլին նախապատրաստում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>3. Մեթոդական միավորման հաշվետվություններ և հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների կազմի քննարկում և հաստատում (զեկուցող՝ մ/մ - ների նախագահներ, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) | 04.02.2023թ. | Մ. Ավետիսյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>մ/մ նախագահներ<br>Կ. Գյուլազյան<br>Ա. Դանիելյան<br>Գ. Հարությունյան<br>Ս. Մանուչարյան | |
| | **VII նիստ**<br>1.Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում. անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. 2022-2023 ուստարվա շրջանավարտների պետական ավարտական, միասնական և կենտրոնացված քննությունների նախապատրաստման հետ կապված հարցերի քննարկում, ինչպես նաև սովորողների կողմից ընտրված ավարտական քննական առարկաների ցանկի իրազեկում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>3. Առարկայական օլիմպիադաներում սովորողների արդյունքների հարցը (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>4.Օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու հարցը (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>5. . ՈՒսման մեջ սովորողների առաջադիմության արդյունքների ամփոփում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>6. էլեկրոնային մատյանների գրանցման, գնահատման, բացակայությունների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ) | 18.03.2023թ. | Մ. Ավետիսյան<br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Վարդանյան<br><br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br><br>Գ. Վարդանյան | |
| | 22<br>**VIII նիստ** | | Մ. Ավետիսյան | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1.ՈՒսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում, նաև անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. Անդրադառնալ էլեկրոնային մատյանների լրացման գործընթացին<br>3.2022-2023 ուստարվա ընթացքում 120 -200 ժամ բացակա ունեցող աշակերտների հարցի քննարկում և 200 ժամ և ավել բացակա ունեցող աշակերտների նույն դասարանում մնալու հարցը (զեկուցող՝տնօրեն)<br>4..ՈՒսումնական հաստատության տնօրինության կողմից ապրիլին տրված գրավոր աշխատանքների կատարման արդյունքների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ, ուսուցիչներ)<br>5. Մայիսյան միջոցառումների հարցի քննարկում (զեկուցող՝ տնօրենի ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալ, ԴԱԿ)<br><br>**IX նիստ**<br><br>1. ՈՒսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում, նաև անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. 2022-2023 ուստարվա ընթացքում 2-12-րդ դասարանների սովորողների 120 -200 ժամ բացակա ունեցող աշակերտների հանձնած քննությունների արդյունքների ամփոփման, և 200 ժամ և ավել բացակա ունեցող աշակերտների՝ նույն դասարանում մնալու հարցը (զեկուցող՝տնօրեն)<br>3.2022-2023 ուսումնական տարվա 4-րդ, 9-րդ, դասարանների սովորղների ավարտական քննություններին մասնակցելու հարցը (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>4.Հիմնական դպրոցում՝ 4-րդ դասարանում իրականացնել գիտելիքների ստուգում, 9-րդ դասարանում՝ ավարտական քննությունների կազմակերպում (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,դասղեկներ)<br>5.Քննությունների կազմակերպման աշխատակարգի ներկայացման և քննական հանձնաժողովների կազմի հաստատման հարցը (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ,ԴԱԿ) | **10.05.2023թ.**<br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br><br>**25.05.2023թ.** | **Մ. Ավետիսյան**<br><br><br>**Գ. Վարդանյան**<br><br><br>**Գ. Գասպարյան**<br>**Վ. Միրզոյան**<br><br><br><br>**Մ. Ավետիսյան**<br><br>**Մ. Ավետիսյան**<br><br><br>**Գ. Վարդանյան**<br><br><br><br>**Մ. Ավետիսյան**<br>**Գ. Վարդանյան**<br><br>**Գ. Գասպարյան**<br>**Վ. Միրզոյան** | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | **X նիստ**<br>1. ՈՒսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում, նաև անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն)<br>2. 2022-2023 ուսումնական տարվա տնօրենի, տնօրենի տեղակալների մ/մ-ների նախագահների, մանկավարժական այլ աշխատողների ( հոգեբան, սոցմանկավարժ, գրադարանավար և այլն), դասղեկների հաշվետվությունների ներկայացման և հաստատման հարցը (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>3. 2022-2023 ուսումնական տարվա 4-րդ դասարանի սովորողներին հավաստագիր, 9-րդ դասարանի սովորողներին հիմնական կրթության վկայական, դասարանի սովորողներին պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանցության մեդալով պարգևատրելու, գերազանց սովորողներին գովասանագրով պարգևատրելու հարցը (զեկուցող՝ տնօրեն)<br>4.Հաստատության 2022-2023 ուսումնական տարվա 2-8-րդ, 9-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրվելու, վերաքննություններ ունեցող սովորողներին ամառային առաջադրանքներ տալու հարցը (զեկուցող՝ տնօրեն )<br>5. Վերաքննությունների հանձնաժողովների կազմի և ժամանակացույցի հաստատման հարցը (զեկուցող՝ տնօրեն)<br>6. ՈՒսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության, դասարանների կոմպլեկտավորման, ԿԱՊԿ ունեցող սովորողների հարցը (զեկուցող՝ տնօրեն, տնօրենի ուսումնական աշխատանքի, ՄԿԱ գծով տեղակալներ)<br>7. 2022-2023 ուսումնական տարվա սովորողների՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփում, հաստատությունից սովորողի տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման (աշակերտական շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ)<br>8. 2022-2023 ուսումնական տարվա կատարած դաստիարակչական աշխատանքների հաշվետվություն (զեկուցող՝ տնօրեն, ՄԿԱ աշխատանքի գծով տեղակալ) | **29.06.2023թ** | Մ. Ավետիսյան<br>Ս. Գաբրիելյան<br>Գ.Դիլբարյան<br>Մ. Ավետիսյան<br>Մ. Ավետիսյան<br>Գ. Վարդանյան<br>Գ. Գասպարյան<br>Վ. Միրզոյան<br>Գ. Վարդանյան<br>Գ. Գասպարյան | |